

վում է «Ջինջիլլամ»։ Այդ բառը թարգմանվում է՝ շղթայաբար, շղթայակերպ։ Իմաստն այս է։ յարաբանչյուր տան վերջին տողի բառերից մեկով (ամենից հաճախ վերջին բառով) սկսվում է հաջորդ տան առաջին տողը և, այսպիսով, «ժրոջ և բզի տները իրար հետ կապվում են շղթայաբար։ Հաստորում բնդգրկված «զինջիլլամների» մի մասը ևս տալիս է կանոնների

խախտման փաստեր (Բազեր Սզլու «Վասն Նազիր շահի սպանման» և այլն)։

Չնայած վերոհիշյալ թերություններին ու վրիպումներին, «Հայ աշուղներ» ժողովածուն ուշագրավ երևույթ է մեր բազմադարյան աշուղական գրականության հրատարակման և գիտական ուսումնասիրության ասպարեզում։

Շ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

EZNIK DE KOİB, *De Deo*, Patrologia Orientalis, tome XXVIII, Fascicules 3, 4. Édition critique du texte arménien et traduction française, notes et tables, par Louis Maries et Ch. Mercier, Paris, 1959.

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ, *Զաղագու Աստուծոյ*, Հայերեն բնագրի՝ քննական հրատարակություն և ֆրանսերեն թարգմանություն, ծանոթագրություններ և ցանկեր, Լուի Մարիես և Շ. Մերսիե, Փարիզ, 1959:

Եզնիկ Կողբացին V դ. հայ այն խոշոր հեղինակներից է, որի փիլիսոփայական երկի բովանդակության ու կառուցվածքի շուրջը մեր բանասիրության մեջ արտահայտվել են տարրեր տեսականության, Հայագետներից ոմանք գտնում են, որ Եզնիկի երկը սոսկ հունական, ասորական և պարսկական տարրեր աղբյուրների ծագկաբաղ է, առանց կառուցվածքային միասնության, շարադրված նյութի տարրեր հատվածների մեջ առանց ներքին սերտ կապի ու միաձուլության։ Ոմանք էլ այն կարծիքին են, որ թեև անվիճելի է օգտագործված տարրեր աղբյուրների առկայությունը Եզնիկի աշխատության հիմքում, սակայն կասկածից վեր է, որ այդ աշխատության հեղինակը մեկ անձնավորություն է, մյուս կողմից՝ ընդունում են, որ Եզնիկի աշխատության ձևագրային միակ օրինակը թերի է, պակասավոր և կամ ունի կառուցվածքային խախտումներ։

Եզնիկի մասին, իբրև V դ. հայ փիլիսոփայի և Մեսրոպի առաջին աշակերտներից մեկի, հիշատակում են Կորյունը և Խորենացին, իսկ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատության մեջ Աշտիշատի ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցանկում հիշվում է նաև Բագրևվանդի եպիսկոպոս Եզնիկը, որը հավանաբար նույն Եզնիկ փիլիսոփան է։ Հետագա դարերում միայն Կիրակոս Գանձակեցին է երկու անգամ հիշատակում նրան՝ առանց նոր բան ավելացնելու։ Ուստի հաճելի անակնկալ է լինում և մեր մատենագրության համար կարևոր հայտնություն, երբ 1762 թ. Կ. Պոլսի պատրիարք Հակոբ Նայյանի կարգադրությամբ Արրահամ վարդապետը Զմյուռնիայում հրատարակում է

Եզնիկի երկը։ Եզնիկի աշխատության ընդօրինակված ձևագիրը չի ունեցել ոչ գլուխների և ոչ էլ առանձին հատվածների բաժանում։ Հրատարակիչը գրքի հիշատակարանում հայտնում է, որ Կ. Պոլսի Հակոբ պատրիարքն է զանազան պրակների բաժանել «զճառակերպ ասացուածսն սրբոյ հեղինակին»¹, վերնագրելով այն «Գիրք ընդդիմութեանց»։ Այնուհետև Եզնիկի երկը դառնում է մեր բանասիրության մանրագնին քրննության առարկան։

Արսեն Բագրատունին 1826 թ. Վենետիկում վերահրատարակում է Եզնիկի երկի Զմյուռնիայի տպագրի օրինակը տալով իր ուրույն բաժանումները։ Բագրատունին ենթադրում է, որ Եզնիկի աշխատությունը հիմնականում բաղկացած պետք է լինի չորս գրքերից. որոնք են՝ ա) Եղծ աղանդոց հեթանոսացն, բ) Եղծ թէչին պարսից. գ) Եղծ կրօնից Յունաց իմաստնոցն և դ) Եղծ աղանդոյն Մարկիոնի։ Բագրատունու կատարած այս բաժանումը հիմնականում ընդունվում է հայ բանասիրության կողմից անվերապահ կերպով և նույնությամբ պահպանվում հետագա վերահրատարակություններում։ Սակայն այս բաժանումը ևս իրեն չի արդարացնում և առավել ևս խճճում է Եզնիկի երկի բովանդակության ու կառուցվածքի տարրեր հատվածների փոխհարաբերության հարցը։ Երկար ժամանակ անհայ-

¹ «Գիրք ընդդիմութեանց արարեալ ի սրբոյ Եզնակայ Կողբացոյ հայոց վարդապետէ և յաշակերտէ մեծի թարգմանչին մերոյ սրբոյն Սևրոպայ, յամի Հայոց 1211» (+551=1762), յիշմիր, էջ 288—289։

տություն մեջ էր մնում Եզնիկի երկի միակ ձեռագիրը, որը ենթադրվում էր, թե հրո ճարակ է եղել Ջմյուռնիայի 1841 թ. մեծ հրդեհի ժամանակ: Մեծ բարերախոսություն է, որ Հ. Աճառյանը գտնում է այն էջմիածնի մատենադարանում և «Հանդես ամսօրյայի» միջոցով հաղորդում իր այս նորույթի մասին: 1902 թ. հոգվածաշարի ձևով «Հանդես ամսօրյայի» էջերում Հ. Աճառյանը, Գ. Տեր-Մկրտչյանի աշխատակցությամբ, լույս է բնծայում «Քննություն և համեմատություն Եզնիկյան նորագիտ ձեռագրին» աշխատությունը, որտեղ տալիս է ձեռագրի տարրնթերցումները բաղադրություն: 1826 թ. հրատարակածի հետ և կատարում լեզվական-քերականական ուղղումներ՝ ելնելով դասական հայերենի լեզվական առանձնահատկություններից ու օրինաչափություններից: Այդ ուղղումները չափազանց արժեքավոր են բնագրում տեղ գտած աղավաղումներն ու վրիպումները վերացնելու և Եզնիկի երկի գիտական բնագրի պատրաստման գործը հաղթահարելու ուղղությամբ:

Այնուհետև Եզնիկի երկի նկատմամբ հայագետների հետաքրքրությունը առավել ևս մեծանում է: Աղբյուրագիտական պրպտումները կարող էին մի կողմից բացահայտել նրա օգտագործած սկզբնաղբյուրները, մյուս կողմից՝ երևան հանել այնպիսի աշխատություններ, որոնք պատմական ճակատագրով չբացել են և որոնց բնույթն ու նշանակությունը հնարավոր է իմանալ միայն այն քաղվածքներից, որ Եզնիկը բերում է իր երկում: Այս առումով առավել ուշագրավ է հատկապես Գալեմբյարյանի «Նորագույն աղբյուրք Եզնիկյան» հոգվածաշարը, որը տպվել է «Բազմավայրում»:

Հետմահու հրատարակությամբ 1959 թ. Փարիզում, Ե. Մյուլպենկյան ֆոնդի միջոցներով, լույս տեսավ ականավոր հայագետ Լուի Մարիեսի կազմած Եզնիկի քննական բնագիրը և նրա ֆրանսերեն թարգմանությունը, աշխատակցությամբ Շ. Մերսիեի:

Լ. Մարիեսի այս նոր հրատարակությամբ հայագիտությունը հարստանում է Եզնիկի երկի քննական բնագրով: Սակայն նախապես նշենք, որ մենք չէինք ունենա Եզնիկի երկի գիտական այս հրատարակությունը, եթե հեղինակը հանդես եկած չլիներ եզնիկագիտության բազմաթիվ կնճառող հարցերի ուսումնասիրությանը նվիրված մի ուրիշ աշխատությամբ, որի տեսական և բանասիրական հետազոտությունների վրա է հիմնվում ներկա աշխատությունը: Այդ պատճառով էլ զրախոսվող աշխատության արժանիքների մասին ճիշտ պատկերացում կազմելու համար հարկադրված ենք նախապես քննության առնել և շարադրել այն հայացքներն ու դրույթները,

որ հեղինակը զարգացրել է դեռևս 1924 թ. հրատարակած իր մենագրության մեջ²:

Հայ բանասիրության համար խիստ կարևոր էր պարզել, թե Եզնիկը ի՞նչ չափով և ի՞նչպես է օգտվել իր սկզբնաղբյուրներից, ո՞րն էր աղբյուրներից օգտվելու նրա եղանակը: Լ. Մարիեսը այս առնչությամբ իր մենագրության մեջ ամենայն մանրամասնությամբ քննում է բոլոր այն տեսակետներն ու դրույթները, որ մինչև այդ արտահայտվել են հայագիտության մեջ: Նախ և առաջ նա վերանայում է Եզնիկի բնագրի Բագրատունու տված բաժանումները՝ համոզիչ փաստարկներով ու առարկություններով ցույց տալով, որ դրանք ամենևին չեն բխում Եզնիկի նպատակադրումից ու հարցադրումներից: Մանրագնի քննությամբ, հարցերի ու հարցադրումների համադրման ու խմբավորման միջոցով հեղինակը պարզում է բնագրի հստակ ու ջինջ պատկերը, որ, անտարսկույս, ավելի հարազատ է Եզնիկին՝ նման մոտեցումը հնարավոր է դարձնում առավել հիմնավորված և պատճառաբանված ձևով բնագրային նոր, գիտական ձևավորում տալու ուսումնասիրվող ձեռագրին: Այդ դեպքում բանասերի թափանցող աչքից չեն կարող վրիպել այնպիսի անհարիր կապակցություններ հավածների կամ պարբերությունների միջև, որոնք առաջանում են կամայական ու բռնադրոսիկ վերադրումների ժամանակ և խաբուսիկ պատրանք ստեղծում հնարավոր խախտումների կամ էլ պակասող նյութերի մասին: Մյուս կողմից՝ բովանդակության ներքին կապերի ու հարաբերությունների ուսումնասիրումը մղում է բանասերին ավելի խոր ճանաչելու իր հետազոտած հեղինակին, բացելու բոլոր այն մութ ծալքերը, որոնք խանգարում են բնագրի, ըստ ամենայնի, ճիշտ բմբռնմանն ու յուրացմանը:

Այդ տեսակետից եզնիկագիտության մեջ լուրջ ներդրում է ֆրանսերեն այն թարգմանությունը, որ տվել է Մարիեսը, էր Վայան դը Ֆլորիվալի համեմատաբար անհաջող թարգմանությունից հետո³: Այստեղ Եզնիկի ամբողջ շարադրանքի բաժանումներն ու ենթաբաժանումները բնագրում առմամբ կատարված են ճիշտ: Եզնիկի թարգմանությունը ներկայացված է այսպես. ա) Ներածություն, բ) Մասն առաջին, իր երկու

² Le De Deo d'Eznik de Kołb connu sous le nom de „Contre les Sectes“, Etudes des critique litteraire et textuelle, par Louis Maries, Paris, 1924.

³ Le Vaillant de Florival. Refutation des differentes sectes des Pałens, de la religion des Perses, de la religion des Sages de Grèce, de la secte de Marcion, par le Docteur Eznik... Paris, 1853.

մեծ բաժիններով, դ՛ Մասն երկրորդ, դարձյալ իր երկու բաժիններով: Սրանք իրենց հերթին ունեն ներքին բազմաթիվ պարբերություններ ու ենթապարբերություններ, որոնք իմաստավորված են համապատասխան վերնագրերով. բնդ որում այդ վերնագրումները երբեմն վերաբերում են շատ փոքր հատվածների: Բնագրի բաժանումների այդ մանրատվածությունը պատճառաբանվում և արդարացվում է նրանով, որ Եղեկի երկր իր բնույթով գերազանցապես բանավիճային է. բնակա-նարար նրա շարադրանքի ու ոճի երանգավորումը նույնպես, ըստ էության, հետադարձ, հրապարակախոսային ու մարտական հաղեցվածություն ունի: Սակայն եթե հեղինակին բնահանուր ասամար հաջողվել է տալ թեմատիկ և տոարկայական բաժանումները ամբողջ բնագրում, ապա նույն բանը չենք կարող ասել այդ թեմատիկ և տոարկայական բաժանումների բնութագրումներին մասին, բնութագրումներ, որոնք պայմանավորված են Մարիեսի աշխարհայացքով: Այստեղ ծագում է կարևոր մի հարց. որն է Եղեկի աշխատության գնահատման Մարիեսի ելակետը, ի՞նչ տեսանկյունից է նա արժեքավորում այն: Եթե Եղեկի աշխատությունը գնահատենք սոսկ իրեն քրիստոնեական դավանանքի ջատագովություն, ինչպես սխալմամբ կարծում է Մարիեսը, ապա բնականաբար առարկայական բաժանումների բնութագրումներն էլ մեծ մասամբ աստվածաբանական դատողությունների երանգավորում պիտի ունենան: Այդ նշանակում է, որ շատ բան կախված է ճիշտ ելակետից: Այդ պատճառով էլ գտնում ենք, որ այլ լեզուներով հետագա թարգմանությունների ժամանակ անհրաժեշտ է անսպառնալիք Մարիեսի տված առարկայական բաժանումների բնութագրումները: Բանն այն է, որ իրականում Եղեկի աշխատությունը ոչ թե աստվածաբանական երկ է, այլ առաջին հերթին մաքուր հզոր գեներ՝ հայ ժողովրդի համար պատմական բախտորոշ մի ժամանակաշրջանում, ինքնապահպանման ու հարատևման գաղափարախոսական մարտահրավեր՝ մի կողմից բյուզանդացիների, մյուս կողմից՝ պարսիկների հետ ծուլվելու վտանգի դեմ: Գրանով կարելի է բացատրել Եղեկի աշխատության կրթչություն ու միաժամանակ դիպուկ, գաղափարական հակառակորդներին խոցող, ոչնչացնող ոճը թրջնամական հոսանքների և ուղղությունների դրությունները մերկացնելիս ու մերժելիս, նրա թունոտ ծաղրն ու սպանիչ արհամարհանքը:

Եղեկի աշխատության բնահանուր գնահատականի հարցում Մարիեսի անբնական լեզու-կետը իր արտահայտությունն է գտել ինչպես մենագրության, այնպես էլ թարգմանության բուն իսկ խորագրում՝ որպես «Յաղագս Աստուծոյ» (De Deo): Մարիեսը իր մենագրության

առաջաբանում մերժում է չմյուսնիո հրատարակության «Գիրք բնդդիմութեանց», Վենետիկի՝ «Եղծ աղանդոց», Վենետիկի՝ «Ընդդիմ աղանդոց» խորագրերը, պատճառաբանելով, թե իբր դրանք չեն բացահայտում Եղեկի բնագրի բովանդակությունը, քանի որ, Մարիեսի կարծիքով, Եղեկի մտահոգությունն ու նպատակադրումը ոչ այնքան տարրեր աղանդների դեմ պայքար ծավալելն էր, որքան աստուծո փառաբանությունն ու ջատագովությունը...: Այդպիսի բացատրությունը հիմնովին սխալ է և կամայական: Մեր բանասիրական քննադատությունը ժամանակին բացասաբար է արտահայտվել այդ տեսակետի մասին⁴: Եթե Մարիեսը ճիշտ լիներ այդ հարցում, ապա Եղեկի իր առաջաբանում երբեք չէր ասի, թե աստված իր էության անքննելի է և իր բնույթով տնհասանելի, ուստի և նրա նկատմամբ չէր պահանջի անքննադատ վերաբերմունք և կույր հավատք ցուցաբերել («Եւ արդ քանզի մի էութիւնն անքնին է և անհաս բնութեամբ, առ նորա անքննութիւնն բնծայութիւն անդիտութեան մատուցանելի է, և առ էութիւնն նորին դաւանութիւն գիտութեան և ոչ քննութեան»): Այստեղից տրամաբանորեն հետևում է, որ անքննելի և անհասանելի երևույթին հատուկ աշխատություն նվիրելը որեւէ նշանակությունից զուրկ կլիներ, քանի որ նախապես խոստովանվում է, որ դա վեր է մարդկային բանականության հասողությունից ու ենթակայությունից: Եթե իրոք Եղեկի երկը աստուծո ջատագովություն լիներ, ապա խիստ կնվազեր նրա բնահանուր արժեքը, նրա հասարակական ու քաղաքական նպատակասլացությունը, ուստի և չէր ունենա այն նշանակությունը, որ նա իրավամբ ունի:

Մարիեսի մենագրության առավել ուշագրավ և արժեքավոր հատվածը Եղեկի օգտագործած աղբյուրների քննությանը վերաբերող գլուխն է: Այստեղ հեղինակի ներդրումը իրոք որ շատ մեծ է: Այս հատվածում հեղինակը տեքստաբանական և աղբյուրագիտական լուրջ հետազոտության է ենթարկում Եղեկի երկը: Մարիեսը այս բաժնում նախ քննում է Եղեկի օգտագործած այն սկզբնաղբյուրները, որ արդեն ծանոթ են հայ բանասիրությանը. բայց այստեղ առավել մեծ ուշադրություն է դարձնում տեքստաբանական այնպիսի կարևոր հարցերի լուսաբանման վրա, որոնք բնորոշում են, թե ի՞նչ եղանակով և որչափով է օգտվել ու քաղվածքներ բերել Եղեկը սարբեր հեղինակներից, ի՞նչպես են այդ քաղվածքները վարպետորեն ու արվեստով ներհյուսվել նրա ստեղծագործական պլանում, և ի՞նչ շափով, շնայած աղբյուրների առատ օգտագործ-

4 Տե՛ս «Թարգմանակ», 1925, ն. Աղոնցի հոդվածը, էջ 198:

ման փաստին, այնուամենայնիվ, Եղնիկը մնացել է ինքնուրույն և միակ ճարտարապետը իր երկրի Այս հարցերի պարզաբանման ու դիտական լուրջ հետևությունների հանգմանը նպաստել է ոչ միայն հեղինակի հայադիտական մեծ պատրաստությունը (աշակերտել է Անտուան Մեյեին և Ֆր. Մակլերին), այլև նրա խոր իմացությունը ասորադիտության, հունադիտության ու լատինադիտության բնագավառներում: Շնորհիվ նրա բազմատեղյակության և բանասիրական անվիճելի հմտության, արդեն իսկ ծանոթ փաստերի վերադնհատման մեջ անգամ Մարիեսը ներություն է բերում:

Հեղինակը ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ Եղնիկը քաղվածքներից օգտվելիս հանդես է բերում յուրօրինակ մոտեցում. նա շատ անգամ հարադատ չի մնում իր աղբյուրին և բուն իսկ մեջբերումների մեջ փոփոխություններ է մտցնում, վերաձևում և վերադասավորում է սկզբնաղբյուրի տրամաբանական կառուցվածքը՝ հարմարեցնելով իր տրամաբանությանն ու նպատակադրումին, որով նույնիսկ պատրանք է ստեղծում այդ տողերի նկատմամբ իրեն սեփական մտահղացում: Անշուշտ, միջնադարում, երբ որոշակի նորմաներ չկային աղբյուրներից օգտվելու կարգի վերաբերյալ, նման մոտեցումը թույլատրելի էր: «Նախ և առաջ Եղնիկը մանրացնում և վերաձևում է իր քաղվածքները» — գրում է Մարիեսը, — որպեսզի կարողանա զբաղվել մի նոր կառուցվածքի մեջ»⁵: Շարունակելով զարգացնել նույն միտքը, Մարիեսը եզրակացնում է. «Որքան էլ մեծ լինեն Եղնիկի մեջբերումները, այնուամենայնիվ նա դիտի ինքնուրույն մեղք»⁶:

Աղբյուրադիտական բաժնի երկրորդ մասում Մարիեսը ցույց է տալիս Եղնիկի այն նոր աղբյուրները (թվով չգիտեմ Որոգինես, Դիոդորոս Բարսացի, Աքիլևս Ստացիոս, Գրիգոր Նյուսացի, Իրենեոս, Աղամանթիոս և Նիքեմ Ասորի), որոնք կարողացել է գտնել երկարատև պրպտումների շնորհիվ: Այդ աղբյուրների հայտնաբերումը ընդարձակում և խորացնում է հայ բանասիրության տեսագաղտը Եղնիկի աշխատության ներքին բովանդակությունը բացահայտելու տեսակետից: Հեղինակը հույս է հայտնում, որ հետագա պրպտումներն ու ջանքերը ղեկ շատ բան կարող են ասել այլ աղբյուրների հետ Եղնիկի երկի առնչության մասին, բայց զբաղվելով ամենևին չի նսեմանա Եղնիկի աշխատության նշանակությունը:

Մարիեսը կատարում է նաև բնագրում տեղ գտած սխալների, աղավաղումների ու վրիպումների ուղղումներ: Ինչպես հայտնի է, այդ ուղ-

ղությամբ զգալի աշխատանքներ են կատարել Նորայր Բյուզանդացին, Գալեմբյարյանը, Թոունյանը և Աճառյանը: Սակայն Մարիեսի առաջարկած ուղղումները բոլորովին անկախ են զբաղվելից: Տեքստաբանական խիստ պատասխանատու այդ աշխատանքները նա կատարում է Ելենիով, մի դեպքում՝ սկզբնաղբյուրների հետ արված մանրազնին համեմատությունից, մյուս դեպքում՝ Եղնիկի երկի քննությունից: Եթե առաջին դեպքում Մարիեսը, համեմատության միջոցով, հնարավորություն է բնականում բանասերներին առավել հստակությամբ և ճշգրտությամբ բերունելու Եղնիկի շարադրանքի առանձին ձևակերպումները, որոնք թեև լեզվականորեն անթերի են, բայց բովանդակած մտքերի առավել բացահայտման և ցայտունության տեսակետից՝ անորոշ, ապա երկրորդ դեպքում, երբ ըստ բնագրի ենթադրվող աղավաղումների փոխարեն առաջարկվում են տարբեր բառեր կամ մեկնաբանություններ, կարելի է զբաղվել մի մասը ընդունել իրեն հավաստի, մյուսները՝ մերժել կամ վիճելի: Այսպես, Եղնիկի՝ «որ բառական է որպես ի տալն զկենդանությունն, նույնպես և ի դիտություն իւրոյ անարար էութեանն, և յիւրոց արարածոցն ի հաստումն ըստ իւրաքանչիւր բնութեանց ածել» նախադասության մեջ ընդգծված բառը Մարիեսը համարում է այդ տեղում «անհասկանալի, մթին», «անբնական», որովհետև զբաղված իմաստը բացատրում է սոսկ իրեն «ամրություն» (solidite). մինչդեռ, բացի զբաղվելից, այդ բառը նշանակում է նաև «ստեղծում», «գոյացություն»: Տվյալ դեպքում Եղնիկի բնագրում ճիշտ է օգտագործված այդ բառը և ամենևին կարիք չկա փոխարինելու այն մի ուրիշ բառով, ինչպես Մարիեսն է առաջարկում՝ «հասումն» բայանունով, որ անհարկ է: Այնուհետև նույն նախադասության մեջ «յիւրոց արարածոցն» բառակապակցության հոլովը հեղինակը սեռական է համարում, այնինչ բացահայտման է և պետք է մեկնել՝ «արարածների կողմից»⁷: Բոլորովին անհարկի և ավելորդ է «զի մի մթարքն» որ զբոս շողայցեն, արդել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին» բարդ ստորադասական նախադասության մեջ «շողայցեն» բառի փոխարինումը «շաղախ իցեն» կամ «շաղախիցեն» բառերով: Անհրաժեշտ է նկատել, որ Եղնիկի աշխատությունը ոչ թե սոսկ փիլիսոփայական երկ է, այլև միաժամանակ գեղարվեստական ստեղծագործություն, ուստի և իր մրտքերը առավել զեղեցիկ և դիպուկ արտահայտելու համար Եղնիկը հաճախ է դիմում դասական հայերենի ղեղարվեստական հնարներին, բառերի դործածության փոխաբերական իմաստներին ու

⁵ 1924 թվականի մենագրությունը, էջ 85:

⁶ Նույն տեղում, էջ 92:

⁷ Նույն տեղում, էջ 176:

դրական ոճավորմանը: Տվյալ դեպքում, հոր խոսքը վերարերում է աչքի շուրջ գտնվող «Երպուհ» (այստեղ մթաբ Դոյականը գործածվել է «Բիմ» («ճպուռ») բառի հոմանիշային արժեքով՝ որպես պեսպիսություն, որ կիրառվել է անմիջապես նախորդող նախադասության մեջ), շատ բնական է և պատկերավոր նրա բնույթը բացահայտել «շողայցեն» բայաձևով: Բ դեպ նշենք նաև, որ ֆրանսերեն թարգմանության մեջ հաճախ Մարիսը չի ըմբռնում մեսրոպյան հայերենում «և» շաղկապի ունեցած իմաստային ամենատարբեր առումները (միասնություն, ներհակություն) և բոլոր դեպքերում թարգմանում է միասնության հարաբերությունը ցույց տվող ֆրանսերեն համապատասխան շաղկապով (et), մինչդեռ զրանից, անտարակույս, տուժում է նդնիկի միտքը այն դեպքերում, երբ զրարարի «և» շաղկապը բարդ համադասական նախադասությունների մեջ բաղադրիչ մասերի ներհակությունն է ցույց տալիս: Այսպես՝ «...պարզել գիտություն ամենայն անդիտաց, և ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագլտ գիտութիւնն. և բղխէ յամենեսին զանպակաս իմաստութիւնն, և ինքն մնայ անխախտ յամենահնար իմաստութեանն» (...et il fait don de science a tous ceux qui sont sans science, et lui-meme en totalitea en lui-meme la science omnisciente; et a gros bouillons sur tous il fait jaillir l'indefectible sagesse et lui-meme demeure inebrianlable en la tout inventive sagesse*, էջ 550): Ընդգծված և-երը միայն ու միայն ներհակության, հակադրության զաղափար կամ հարաբերություն են արտահայտում, ինչպես՝ բայց, սակայն, մինչդեռ, այնինչ շաղկապները: Հաճախ նկատում ենք բնի նախորդի միայն մեկ իմաստի (միասնության զաղափար) ըմբռնում թարգմանության մեջ, մինչդեռ զրարարում այդ նախորդը կիրառական բաղաժիպ իմաստներ է արտահայտում՝ նայած թե ինչ խնդրառության մեջ է գրտնրվում: Օրինակ՝ «...և դիաբոլ չէականքն և չմշտնջենաւորք բնի էականին և բնի մշտնջենաւորին երկրպագութիւն առնուցուն» (Et comment les (etres) qui n'ont pas, par essence l'etre et ne sont point eternels, iront-ils, avec l'Être, qui a, par essence, l'etre, et avec l'Eternel, recevoir adoration*, էջ 552): Այստեղ ընդ նախորդը երկու դեպքում էլ տրական խնդիր է վերցրել (էականին, մշտնջենաւորին) և արտահայտում է վոխարինութեան իմաստ (ինչպես՝ է, որ ոչ-էական և ոչ-մշտնջենաւոր արարածները երկրպագութիւն են բնդունում էականի և մշտնջենաւորի վոխարին, նրանց տեղ), մինչդեռ Մարիսը թարգմանել է միասնության առու-

մով՝ էականի և մշտնջենաւորի հետ (avec) կապով, որը շատ հեռու է և նույնիսկ խեղաթյուրում է նդնիկի բուն միտքը: Երբեմն շփոթվում են նաև զրարարի հոգի կիրառության տարբեր հանգամանքներն ու նրանց արտահայտած տարբեր իմաստները: Այսպես՝ «Եւ մանաւանդ մարմնաւորք և երևելիք, որպէս արեգակնդ և լուսինդ և աստեղք և հուր և ջուր և երկիր, որ ի մոզուց և ի հեթանոսաց պաշտին» (.Et surtout des (etres) corporels et visibles, comme votre soleil et votre lune, et astres, et feu, et eau, et terre, qui par mages et par Païens sont cultuelement honores!*, էջ 552): Դ-հոգը դրված է միայն արեգակ և լուսին բառերի վրա ոչ թե այն իմաստով, որ նշանակի ձեր արեգակը, ձեր լուսինը, ինչպես կարծում է Մարիսը (votre), այլ այն իմաստով, որ նշված գոյականներից (աստեղք, հուր, ջուր, երկիր) միայն արեգակ և լուսին բառերն են նախապես հիշված, ուստի և դ հոգը գործածված է որոշիչի նշանակությամբ:

Հեղինակը զրարարի «բաւական է» դիմադուրկ բայի իմաստը հասկանում է արդի իմաստով («հերիք է» suffit), մինչդեռ զասական հայերենում դերադանցապես նշանակել է «կարող է», «ի վիճակի է» չմտ. «...որ բաւականն է որպէս ի տալն զկենդանութիւնն, նոյնպէս և ի գիտութիւն իւրոց անարար էութեանն (lui pecisement qui suffit, comme a donner la vie, pareillement aussi a conduire jusqu'a la connaissance (non comprehension) de son essence incree..., էջ 549):

Իզուր է հեղինակը, հետեւելով ձեռագրին, անփն ըրառի սխալ ձևը դրել իր կազմած բնագրում («անընդուն»), որովհետև ան-ժխտական ածանցն է, իսկ փն-՝ արմատը. այստեղ չկա շեշտից կախված հնչյունափոխություն, որպեսզի ստանայինք կրկնակ ն (նն), ինչպես՝ փնու-թիւն, փնափնեթիւն և այլն:

Ահհրաժեշտ է սակայն բնդգծել, որ մատնանշված թերություններն ու վրիպումները ամենին չեն նսեմացնում Մարիսի մենագրության և թարգմանության արժեքն ու նշանակությունը: Գրանք երկուսն էլ արժեքավոր ներդրում են եղնիկագիտության բնագավառում:

Բնագիրը կազմելիս է. Մարիսը հիմք է բնդունել նդնիկի երկի 1826 թ. Բաղրատունու հրատարակությունը՝ բաղդատելով ձեռագրի այն տարբերակներին հետ, որ հրատարակել են Հ. Աճառյանն ու Գ. Տեր-Մկրտչյանը: Սուրանկյուն փակագծերում, իբրև ենթադրվող բացթողումների լրացումներ, տրվել են հեղինակի կողմից առաջարկվող վերականգնումները, որոնք մեծ մասամբ հիմնված են հունարեն սկզբնաղ-

բյուրների մանրակրկիտ ուսումնասիրության վրա, իսկ տողատակում տրվում են տարրերը-ցումները (նույնիսկ ուղղագրական բնույթի ամենաչնչին տարրերությունները) և հնագրադիտական բնույթի առանձին նշումներ ձեռագրի նկատմամբ: Ամբողջ բնագիրը, ինչպես ձեռագրում, ներկայացվում է առանց բաժանումների, գլուխների կամ պարբերությունների, վերջում միայն տրվում են Մարիեսի առաջարկած բաժանումները: Ֆրանսերեն լեզվով՝ իրենց նոր վերնագրերով:

Ֆրանսերեն թարգմանությունը կատարված է բարձր որակով, բարեխղճությամբ ու խնամքով: Այստեղ արգեն հեղինակը տվել է թեմատիկ ու առարկայական նյութերի իր բաժանումները՝ բնութագրումներով, համապատասխան նշումներով: Թարգմանության վերջում դրված ծանոթագրությունների հարուստ բաժինը բնագրվում է շուրջ 1046 բացատրություն: Ծանոթագրությունների բաժինը, առանց վերապահության, կարելի է համարել ուսումնասիրություն: Այստեղ ոչ միայն մեկնաբանվում են եզրիկի բնագրի առանձին մոթ և խրթին տողերը, հունարեն սկզբնաղբյուր-

ների միջոցով լուսարանվում համապատասխան տեղերը, հնագրադիտության և այլ հարակից ու օժանդակ փաստերի միջոցով արվում են կարևոր վերականգնումներ, այլև ցույց է տրվում, թե մեկնաբանման ի՞նչ տարրերություններ կան իր և մյուս թարգմանությունների միջև, մերժվում կամ ընդունվում է այս կամ այն մեկնությունը և կամ էլ ավելացվում են իմաստի նոր նրբերանգներ: Վերջում տրվում են Աստվածաշնչից Եզրիկի կատարած մեջբերումների տեղերը, ինչպես և առարկայական նյութերի ցանկը:

Այսպիսով, մեր հայագետների ուշադրությունը հրավիրելով Մարիեսի հրատարակած Եզրիկի բնագրի և ֆրանսերեն թարգմանության անժխտելի արժանիքների վրա, գտնում ենք, որ V դարի մեր մատենագրության ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Եզրիկի այլ լեզուներով հետադա թարգմանությունների հաջողությունը կարող է երաշխավորվել, երբ քննադատարար կյուրացվեն այդ բնագավառում Մարիեսի կատարած ներդրումները:

Լ. ԽԱՉԵՐՅԱՆ

АРАМ БАБАЯН. *Шиллер в армянской литературе и в театре* (на армянском языке). Ереван, 1959, 382 стр.

За последние годы издательством Академии наук Армянской ССР выпущено несколько работ, посвященных литературным связям и взаимодействиям армянского народа с другими народами. К числу таких интересных и полезных работ принадлежит книга А. Бабаяна «Шиллер в армянской литературе и в театре», подготовленная к печати Институтом литературы им. М. Абе-гьяна.

Исследование Бабаяна состоит из следующих основных глав: «Армянская литература и Шиллер»; «Армянские переводы произведений Шиллера»; «Шиллер на армянской сцене»; «Шиллер в наши дни». В первой главе, посвящей характеру введения, дается общая оценка творчеству великого немецкого писателя. Книга имеет предисловие и примечания.

Одним из главных вопросов, на который в книге обращено большое внимание, является история переводов произведений Фридриха Шиллера на армянский язык. На основе богатого литературного и архивного

материала здесь дана подробная и почти исчерпывающая история армянских переводов стихотворений, баллад, драматических и других произведений великого немецкого писателя. Автору удалось установить, что первые переводы Шиллера на армянский язык были сделаны Хачатуром Абовяном. Выдающийся армянский патриот и просветитель в 1831 и в последующие годы, в период учебы в Дерпте, перевел с немецкого на армянский язык баллады Шиллера «Рыцарь Тогенбург», «Порука» (частично) и стихотворение «Идеалы». Абовян начал, но не закончил перевод известной «Песни о колоколе». Примечательно, что автор бессмертного романа «Раны Армении» перевел «Рыцаря Тогенбург» и на грабар и на ашхарабар.

Переводы Хачатура Абовяна не были напечатаны. Армянский перевод Шиллера впервые был опубликован в 1849 г. в Москве, в сборнике стихов и др. сочинений, составленном и изданном М. Эмином для студентов Лазаревского института восточных